Մեծն Ներսէս «'Ի քաղաքս և յագարակս և 'ի վանորայս», ինչպէս որ կը յիշեն նաև Խորենացին և Բուզանդ Օտարատուն, և Օտարանոց անուամբ տեղեր։

Պանդոկք։ Ճամբորդներու համար շինուած էին ասոնք, զոր նոյնպէս Սեբաստ պատմիչն յիշէ ըսելով. «Նաև հրամայէր 'ի զերծ տեղիս, և յանկս Ճանապարհաց և 'ի գլուխս լերանց պանդոկ շինել». իսկ մեկալ պատմիչներն Օտարատուն ըսելով ասոնք ալ անոնց մէջ կ'իմանան։....

Ո՛հ երջանիկ դար՝ երբոր այս ամենայն բարեգործութիւնները ունէր Հայաստան։

---

## Վտանգաւոր դէպք մը:

Մօտերս գաղղիական օրագրի մը մէջ տխուր և զարմանալի պատահար մը կարդացինք։

Գաղղիոյ ընդարձակ անտառներուն մէկուն մէջ երկայն ատենէ 'ի վեր բազմութիւն մը չորքոտանեաց անխնամ մնալով բոլորովին վայրենացեր էին, և որովհետև տէրութիւնը նոր հրամանով մը այս անտառիս շրջակայ ձորերն ալ անոր հետ միացուցեր էր, անոնց տէրերը այս կենդանիներէս վնաս կրելով, բողոքեր էին տէրութեան, որ հրաման տուաւ որսալ ու բոլորովին ջնջել այդ հրէշները անտառին մէջէն։

Նուազընէ որչափ ալ դժուարին էր այս գործս, քիչ ատենէն քանի մը ցուլ միայն մնացին, զորոնք դժուարին կ'ըլլար նուաճելը։ Այլ և այլ տեղեր թակարդներ լարեցին, բայց երկայն ատեն յաջող ելք մը չունեցան։ Օր մը երեկոյեան դէմ այս ցուլերէն մէկը սաստիկ ծարուած, սովորական վարժած ջուր խմելու տեղը կ'երթար ծարաւը անցընելու. մէյ մ'ըն ալ յանկարծ ոտուըներէն մէկը թակարդի մէջ բռնուեցաւ, և հոն հսկող պահապանին շարժմունքէն որ դէպ 'ի իրեն վրայ կու գար, սաստիկ խրտելով ու շարժելով՝ աւելի ևս թակարդին հանգոյցը պրկեցաւ։ Պահապանը մօտենալով՝ եղջիւրներուն չուան մը անցուց ու ցցի մը կապեց որ հաստատուն կերպով գետին խոթուած էր, և ինքը փութով գնաց մերձակայ բնակութիւնները լուր տալու, որ հետը օգնականներ առնելով գայ ու այս կենդանիս մօտիկ գեղը տանի։ Հոն գտաւ գլխաւորապէս Պարոն Ս... անտառապահը, որ մէկէն քանի մը օգնականներով ճամբայ ելաւ։ Երբոր կենդանւոյն մօտեցան, տեսան որ թակարդին կապերը փրցուցեր էր և միայն եղջիւրներուն վրայի հանգոյցը մնացեր էր. Պարոն Ս. մէկէն ուզեց վրան յարձըկիլ, բայց այն վայրկենին որ զանիկայ բռնելու մօտ էր, ցուլը կատղելով բոլոր ուժովը խլեց գետնէն չուանին կապուած ցիցը ու մէկէն զինքը բռնել ուզողներուն վրայ յարձըկեցաւ, որոնք արտորնօք թողուցին ու փախչիլ սկըսան։

Դժբաղդաբար Պարոն Ս. թփուտներու մէջ մտնել ուզելով՝ յանկարծակի ինկաւ ու գետին փռուեցաւ. ցուլը մէկէն անոր վրան յարձըկիլը ու իր եղջիւրներովը օդուն մէջ նետելը մէկ ըրաւ, որ շատ մը բարձրանալէն ետքը՝ աւազուտի վրայ ինկաւ. ցուլը իմանալով որ մեռած չէ՝ կրկին անգամ մ'ալ վեր նետեց անտառապահը, և այս անգամուս եղջիւրները խեղճին մարմնոյն մէջ մտան։ Ցուլը ապահով ըլլալու համար թէ արդեօք որսը բոլորովին մեռած է, գետին ձգեց զանիկայ ու ինքը քանի մը քայլ հեռու երթալով՝ ամենայն ուշադրութեամբ կը դիտէր թէ արդեօք կենդանութեան նշան մը ունի։ Պարոն Ս. որ չէր կարծեր ցուլին անանկ մօտ ըլլալը՝ թէպէտ և անոր կատաղի չնչառութիւնը կ'իմանար, ծայրիւ աչաց ուզեց մէյ մը նայիլ. ցուլը իմացաւ ու դէպ 'ի վրան գալ սկսաւ. պարոն Ս. տեսնելով որ կու գայ՝ մէկէն աչուըները գոցեց ու ահով դողով ցուլին տալու հարուածին կը սպա-

սեր, բայց անիկայ չորս կողմը մէյ մը պտըտելէն ետքը՝ պաշտպանի պէս քովը կայնեցաւ։

Ժամէ մը աւելի այս երկիւղալի տառապանաց մէջ մնացեր էր պարոն Ս. երբոր իրեն ընկերները տեսնելով որ իր բնակութիւնը չգտանար, ենթադրեցին թէ ինչ կրնար գլխէն անցած ըլլալ. ուստի ամենայն զգուշութեամբ սկսան փնտռել զինքը, և վերջապէս գտան անշարժ գետին փռուած. և կարծելով թէ մեռած է, մէկէն մեռելաթաղներու իմացուցին որ գան վերցընեն, և իրենք իրենց տեղը քաշուեցան։

Արդ նոյն գիշերը պարոն Ս. տեսնելով իրեն ասանկ ուժաթափ վիճակը և ուզելով աւելի մեռնիլ մէկ հարուածով մ'ալ, քան թէ այն անհնարին տագնապով ողջ մնալ, և կամ թերևս յուսալով որ այն մթութեան մէջ իր անգութ դահճին ձեռքէն կարենայ միջոցով մը խալըսիլ, շարժեցաւ մէյ մը ու բացաւ աչուըները, և ահա ցուլը հոն չէր։ Ան ատեն նորէն ապրելու յուսով՝ որ միշտ քաղցր է մարդուս, կրկին զօրացած ոտք ելաւ և սկսաւ դէպ 'ի իր ընկերաց բնակութիւնը երթալ, որոնք քնոյ մէջ էին. բայց երբոր տեսան այդ անակնունելի դարձը՝ որուն ամենևին չէին յուսար, շատ ուրախացան և մէկէն ամենայն խնամքով անկողին մը հանգչեցուցին զինքը։ Երկրորդ օրը պարոն Ս. շատ չիզարմացաւ տեսնելով որ դէպ 'ի իրեն կեցած հիւղը կառք մը կու գար մեռելի դագաղ մ'ալ մէջը, որ բարեբախտաբար աւելորդ էր։ Նոյն կառքով պարոն Ս. հիւանդանոց մը տարուեցաւ, ուր ամենայն հոգ և խնամք ըլլալով վրան՝ յոյս կայ որ դարձեալ իրեն կատարեալ առողջութիւնը կարենայ ստանալ։

---

## Առ լուսինն։

Սփռեալ այսրէն ի թուփ եւ ձոր
Ըզքոյ խաղաղ լոյս միգազգած,
Ազդեցութեամբ քոյով անդորր
Խաղաղանայ սիրտ իմ յանկարծ։

Յիր ըղձմարգաւս երեսքդ յածին
Ակնարկելով քաղցրահայեաց.
Օ՛ երդ խանդակաթ աչք մըտերմին
Զրկեալ դէտակն յիմ բախտ կենաց։

Տըխուր եւ զուարթ ժամուցն համայն
Ազդէ յոգիս մէն մի ձայնիկ.
Ընդ խինդ եւ ցաւ վարեալ գընամ
Յառանձնութեանըն միայնիկ։

Ընթա, ընթա, առուակ սիրուն.
Բերկրանք առ իս այլ ոչ դարձցին.
Խաղք եւ համբոյրք անցին հանգոյն,
Հանգոյն երդուեալն ուխտ սիրային։